կանայք կ՚ըլլան . ժամանակնին մեծ մասը քնանալով կամ իրենց աղախնեաց մահճին մէջ պառկելով կ՚անցընեն . և թէ որ մէկն ուզէ ասոնց անկողինը գտնելու՝ առաւօտը կը ծախեն առանց մտածելու թէ իրիկուան ինչ պիտի ընեն ։

Թէ որ Ամերիկայի այլ և այլ գաւառները պտըտելու ելլենք, հիւսիսային կողմերը դիմացնիս Եւրոպայի ու Ասիայի հիւսիսային կողմին նման ժողովուրդներ կ՚ելլեն ։ Տեւխսի նեղուցին վայրենիները ձիթագոյն են, տգեղ, կարճահասակ, բայց ուժեղ, սրունքնին կարճ ու հաստ, երկայն կ՚ապրին և շատերը մինչուան հարիւր տարին կը հասնին ։ Ասնք Լափոններուն գոյնն ու ձեւը և սովորութիւններն ունին . և ինչպէս Լափոններուն մէջ Ֆիններ կը գտուին որ ճերմակ, գեղեցիկ, երկայնահասակ ու բարեկազմ են, այսպէս ալ Տեւխսի նեղուցին բնակչաց մէջ ալ ճերմակ մարդիկ կը գտուին ամենևին նման Ֆիններուն ։ Հուտսընի ծոցին մօտերն ալ բրդոտ մարդիկ կը գտուին ամենևին Ճակոյի վայրենիներուն նման, և Գրանատայի ու Յամաք-Երկրին բոլոր բնակիչները այնչափ Թաթարներուն կը նմանին՝ որ եթէ տեղեաց տարբերութիւնը չըլլար, նոյն ազգը կրնային սեպուիլ ։

( ՄՆԱՑԱԾՆ ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ )

---

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Վիճակագրութիւն Անգլիոյ և Գաղղիոյ մայրաքաղաքաց ։

ՆՈՐԱԳՈՅՆ հաշիւներէ առնելով, զորն որ Տարսի անունով գաղղիացին 'ի պաշտօնէ ըրեր է, կը տեսնենք որ Լոնտրայի բովանդակ մակերևոյթը 210 միլիոն քառակուսի մեգր է, բնակչաց թիւը 1 միլիոն 924,000 հոգի է, տներուն թիւը 260,000 է, ճամբաներուն երկայնութիւնը 1 միլիոն 126,000 մեգր է, իսկ ճամբաներուն մակերևոյթը առանց մայթերն 1 առնելու 6 միլիոն մեգր է, լուալիքներուն երկայնութիւնը 639,000 մեգր է ։

1 Տճ. Գուստըրըմ ։

Փարիզու բովանդակ մակերևոյթը 34 միլիոն 379,016 քառակուսի մեգր է, բնակիչը 1 միլիոն 53,897 հոգի է, տներուն թիւը 29,526 է, ճամբաներուն երկայնութիւնը 425,000 մեգր է, ճամբաներուն մակերևոյթը, առանց մայթերն սեպելու 3 միլիոն 600,000 քառակուսի մեգր է, լուալիքներուն երկայնութիւնը 135,900 մեգր է, մայթերուն մակերևոյթը 888,000 մեգր է ։

Ասով Լոնտրա մարդ գլուխ 100 մեգր մակերևոյթ կ՚իյնայ ։ Լոնտրա իւրաքանչիւր տան 7 ու կէս հոգի կ՚իյնայ, իսկ Փարիզ իւրաքանչիւր տան 34 հոգի կ՚իյնայ ։ Լոնտրա իւրաքանչիւր տան 40 մեգր և 40 հարիւրորդամեգր ճամբու երկայնութիւն կ՚իյնայ, իսկ Փարիզ իւրաքանչիւր տան 15 մեգր ճամբու երկայնութիւն կ՚իյնայ ։

Այս համեմատութիւններէս երկու մայրաքաղաքաց տարբերութիւնը կ՚իմացուի . ասկից կը հետևի թէ ուրեմն Լոնտրա շատ անշէն մակերևոյթ կայ, և թէ ան տեղի տները շատ բարձր չեն, և թէ իւրաքանչիւր ընտանիք իւր տունն ունի ։

Պաւիերայի արդեւեան ջրհորը ։

ԸՆԴԳՈՒՆ ըսուած երևելի արդեւեան ջրհորը, որ Հաւենական Պաւիերայի Քիսինկեն քաղաքը 1832էն սկսեր էին բանալ, այս օրերս լմնցեր է ։ Քիսինկեն քաղաքին գիւղը աղային հովիտ մը մէջ կ՚իյնայ, և Պալթիկ ծովուն երեսէն 300 մեգր բարձրութիւն ունի ։ Անցեալ տարի յունիսի մէջ այս ջրհորիս խորութիւն 560 մեգր հասեր էր, բայց յառաջ քան այս խորութիւնս հասնելու, աղի այլ և այլ կարգերէ անցեր են որ մէկմէկէ կրանիդի ժայռերով բաժնուած էին ։ Վերջը հասեր են ածխային թթուուտ կազի մը կարգի, ասկէ ներքեւ կրանիդի . վերջապէս այս տարի հոկտեմբերի 12ին սաստիկ որոտմամբ ջրհորին բերնին վրայի գործիքները կոտրտեր են և սկսեր է 12 հարիւրորդամեգր տրամագծով ջրեղէն սիւնակ մը սաստիկ բռնութեամբ մինչուան 30 մեգր բարձրութեամբ վեր նետուիլ ։ Այս ջուրը յստակ ու վճիտ է . գետնէն ելլելու ատեն Ֆարէնհայդի 66° բարեխառնութիւնն ունի և ամէն 3 1/4 զուտ աղ կը բերէ, որով վայրկեանը 12 խորանարդ մեգր աղ կու տայ իսկ ջրհորին խորութիւնը 630 մեգր է ։

Հաշիւ կ՚ընեն որ ամէն տարին 3 միլիոն հազարակրամ աղ կրնայ ելլել, և ամենաժան ալ սեպելով 300,000 տարեկան եկամուտ կու տայ ։

---

ՆՈՅԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ՄԱՄՈՒԿ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ